



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

PHCR
Primary Healthcare Reform Project

ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՆԱՀԱՏՈՒՄ

ԼՈՌՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐԻ ԱՍԴ ԹԻՐԱՆԱՅԻՆ
ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՓՆԱՀԱՏՈՒՄ

2006



Դեկտեմբեր, 2008 թ.

ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակման մեջ արտահայտված հեղինակների կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

ԼՈՌՈՒ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԵՐԻ ԱԱՊ ԹԻՐԱԽԱՅԻՆ
ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ

2006

ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակումն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) աջակցությամբ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրի կողմից: Այստեղ արտահայտված հեղինակների կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Նախարան

Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագիրը ԱՄՆ Միջազգային Չարագման Գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող հնգամյա (2005-2010թթ.) ծրագիր է, որն իրականացվում է «Էմերջինգ Մարկեթս Գրուփ» (ԷՄԳ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2005թ.-ի սեպտեմբերին շնորհված պայմանագրով: Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել առողջության առաջնային պահպանման կայուն և բարձրորակ ծառայությունների օգտագործումը՝ հօգուտ հայ ընտանիքների առողջության բարելավման: Այս նպատակն իրականացվում է՝ աջակցելով ՀՀ Առողջապահության նախարարությանը (ՀՀ ԱՆ) ներդնել փաթեթ՝ կազմված վեց միջոցառումներից, որոնք առողջապահական բարեփոխումները կապակցում են ծառայությունների մատուցման հետ այնպես, որ մեկը մյուսին լրացնելով՝ ստեղծեն սիներգիկ արդյունք: Նշված վեց միջոցառումները ներառում են. աջակցությունը առողջապահական բարեփոխումներին և քաղաքականությանը (այս միջոցառման բաղկացուցիչ մասն է բուժհաստատությունների վերանորոգումը և սարքավորումներով հագեցումը), բնակչության ազատ հավաքագրումը, ընտանեկան բժշկությունը, բուժօգնության որակի բարելավումը, առողջապահության ֆինանսավորումն ու բնակչության ուսուցումը, առողջության խթանումը և հիվանդությունների կանխարգելումը:

«Ինչպիսի՞ ներգործություն են ունենում այս միջոցառումները». սա հաճախ հնչող, սակայն հազվադեպ ֆինանսավորվող հարց է: Բարեբախտաբար, ԱԱՊԲ ծրագիրը ներդրել է մի գործընթաց, որը պատասխանում է «ներգործության» հարցին. մշակվել է վեց հարցաշարերից բաղկացած մի փաթեթ՝ ծրագրի առաջընթացը վերահսկելու և արդյունքները գնահատելու նպատակով: Այս հարցաշարերից երեքն ուղղված են բուժհաստատությունների գնահատմանը և նախատեսված են նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանության միջոցով ծրագրի ներգործության գնահատման համար առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) 164 հաստատություններում և դրանց ուղեգրման բուժհաստատություններում: Մյուս երեք հարցաշարերը նախատեսված են Հայաստանի բնակչության շրջանում տեղի ունեցող փոփոխությունների գնահատման համար՝ կիրառելով նույն նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանությունը:

Այս հաշվետվությունն ամփոփում է Լոռու և Շիրակի մարզերի (1-ին գոտի) առողջության առաջնային պահպանման թիրախային հաստատությունների կարողությունների ելակետային գնահատումը: Այս գնահատման արդյունքները կարող են կիրառվել ներքին պլանավորման համար: Դրանք նաև համեմատությունների հիմք են հանդիսանում 1-ին գոտու բուժհաստատություններում ծրագրի ազդեցության հետագա գնահատման համար:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնը, որը հանդիսանում է ԷՄԳ ենթակապալառուներից մեկը, ստանձնել է ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման հիմնական պատասխանատվությունը: Սույն ուսումնասիրության հեղինակներն են Անահիտ Դեմիրճյանը, Ծովինար Հարությունյանը, Վարդուհի Պետրոսյանը և Մայքլ Թոմփսոնը: Հարկ ենք համարում շնորհակալություն հայտնել նաև Հռիփսիմե Մարտիրոսյանին և Նունե Տռուզյանին՝ ուսումնասիրության բոլոր փուլերում իրենց արժեքավոր մասնակցության համար, ինչպես նաև՝ մեր հարցազրուցավարներին (նպատակային մարզերի առողջության առաջնային պահպանման բժիշկներին)՝ տվյալների հավաքագրման գործում իրենց ցուցաբերած ջանքերի համար:

Վստահ ենք, որ այս ուսումնասիրության արդյունքներն արժեքավոր կլինեն ինչպես առավել տեղեկացված որոշումների կայացման միջոցով առողջապահական արդյունքների բարելավման, այնպես էլ՝ նոր ծրագրերի մշակման համար: Սույն հաշվետվությունն առկա է ԱԱՊԲ ծրագրի կայքում՝ www.phcr.am: Դրա վերաբերյալ մեկնաբանությունները և հարցերը կարող եք ուղարկել info@phcr.am ինտերնետային հասցեով:

Ռիչարդ Ա. Յոդեր
Ծրագրի ղեկավար, ԱԱՊԲ ծրագիր

Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	iv
1. Ներածություն.....	1
2. Մեթոդներ	4
3.1 Կառուցվածք, կարողություններ, անձնակազմ	7
3.2 Ընտանեկան բժշկություն	10
3.3 Ազատ հավաքագրում, ֆինանսավորում և կառավարում	14
3.4 Բնակչության ուսուցում	17
Հավելված 1. Գյուղական ամբուլատոր բուժհաստատությունների գնահատման հարցաթերթիկ	24
Հավելված 2. Պոլիկլինիկական հաստատությունների գնահատման հարցաթերթիկ	34
Հավելված 3. Լոռու և Շիրակի թիրախային բուժհաստատությունների անձնակազմի կառուցվածքը	47
Հավելված 4. Լոռու և Շիրակի թիրախային բուժհաստատությունների պատկանելությունը, օգտագործվող սենյակների թիվը, սարքին վիճակում գտնվող մեքենաների թիվը, էլեկտրամատակարարման առկայությունը	49
Հավելված 5. Սարքին սարքավորումները/պարագաները Լոռու և Շիրակի թիրախային ԲՄԿ/ԳԲԱ-ներում	51
Հավելված 6. Լոռու և Շիրակի թիրախային պոլիկլինիկաների և առողջության կենտրոնների սարքավորումները/պարագաները -1	57
Հավելված 7. Լոռու և Շիրակի թիրախային պոլիկլինիկաների և առողջության կենտրոնների լաբորատոր սարքավորումները.....	60
Հավելված 8. Լոռու և Շիրակի թիրախային ԱԱՊ հաստատություններում առկա կահույքը	62
Հավելված 9. Գնահատվող ԲՄԿ/ԳԲԱ-ների հեռավորությունը մարզ/շրջկենտրոնից (կմ)	64
Հավելված 10. ԸԲ/ԸԲք-երի վերապատրաստումները վերջին 5 տարվա ընթացքում	65
Հավելված 11. Լոռու և Շիրակի թիրախային բուժհաստատությունների անձնակազմի կարճաժամկետ կլինիկական վերապատրաստումները.....	67
Հավելված 12. Լոռու և Շիրակի թիրախային ԱԱՊ հաստատություններ կատարված այցերի թիվը 2005 թվականին և 2006 թվականի փետրվար-մարտ ամիսներին.....	68
Հավելված 13. Լոռու և Շիրակի թիրախային բուժհաստատությունների անձնակազմի կատարած տնային այցերի թիվը 2005 թվականին և 2006 թվականի փետրվար-մարտ ամիսներին	70
Հավելված 14. Սպասարկվող բնակչության, տարեկան մահերի և հոսպիտալացումների թիվն ըստ բուժհաստատությունների.....	72
Հավելված 15. Տարեկան (2004թ., 2005թ.) հղիությունների, ծնունդների՝ ըստ ծննդաբերության վայրի, նորածնային մահերի և հաշմանդամների թիվն ըստ բուժհաստատությունների	75
Հավելված 16. Որոշ առողջապահական թեմաներով ցուցապաստառների առկայությունը Լոռու և Շիրակի թիրախային բուժհաստատություններում	78
Հավելված 17. Հանրակրթական նյութերի (բրոշյուր, թերթիկ) առկայությունը Լոռու և Շիրակի թիրախային հաստատութ.-ներում	80

Հապավումների ցանկ

ԱԱԻ	Առողջապահության ազգային ինստիտուտ
ԱԱՊ	Առողջության առաջնային պահպանում
ԱԱՊԲ	Առողջության առաջնային պահպանման բարեփոխումներ
ԱԲ	Ապացուցողական բժշկություն
ԱԾՅԿ	Առողջապահական ծառայությունների հետազոտական և զարգացման կենտրոն
ԱԿ	Առողջության կենտրոն
ԱՅԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԿՈՐ	Աջակցության միացյալ մեթոդիստական կոմիտե (անգլերեն անվանումից)
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԲԱ	Բժշկական ամբուլատորիա
ԲԱՍ	Բժիշկներ առանց սահմանի
ԲԲԲ	Բազային բժշկական քուլեջ
ԲՀԻ	Բաց հասարակության ինստիտուտ
ԲՄԿ	Բուժակ – մանկաբարձական կետ
ԳԲԱ	Գյուղական բժշկական ամբուլատորիա
ԳԺԴՄՅԻ	Գերմանական ժողովուրդների դաշնակցության միջազգային համագործակցության ինստիտուտ
ԴԲՏՓԿ	Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն
ԴՈԹՍ	Ուղղակիորեն վերահսկվող կարճաժամկետ բուժում
ԵԽՄԿ	Երեխայի խնամքի միջազգային կազմակերպություն
ԵՊԲՅ	Երևանի պետական բժշկական համալսարան
ԷՄԳ	Էներջինգ մարքեթս գրուպ (անգլերեն անվանումից)
ԸԲ	Ընտանեկան բժշկություն
ԸԲք	Ընտանեկան բուժքույրություն
ԸՊ	Ընդհանուր պրակտիկա
ԿՇՅ	Կենտրոնական շրջանային հիվանդանոց
ՀԱԿ	Համայնքային առողջության կոմիտե
ՀԱՅ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԾՓ	Հիմնական ծառայությունների փաթեթ
ՀՀ	Հայաստանի հանրապետություն
ՀՍԲԾ	Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիր
ՁԻԱՅ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԿ ՄՅ	Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՄԳ	Մոնիթորինգ և գնահատում
ՄԻԱԿ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄՅԻՎ	Մանկական հիվանդությունների ինտեգրված վարում
ՄՕԶ	Միջազգային օգնություն և զարգացում
ՆՕՎԱ	Նորարարություն և օժանդակություն վերարտադրողական առողջությանը
ՋՀ	Ջինիշյան հիմնադրամ
ՍԻՅ	Սրտի իշեմիկ հիվանդություն
ՍՇՅ	Սուր շնչառական հիվանդություններ
ՍԿ	Սեռավարակներ
ՎԿ	Վորլդ Վիժն

1. Ներածություն

1.1 ԱԱՊԲ ծրագրի մասին

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) հնգամյա պայմանագիր է կնքել «Էմերջինգ մարքեթս գրուպ» (ԷՄԳ) միջազգային խորհրդատվական ընկերության հետ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագիրն իրականացնելու նպատակով: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել որակյալ առաջնային բուժօժանայությունների մատչելիությունը բնակչության համար՝ մի կողմից Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բուժհաստատությունները և ընտանեկան բժիշկների/բուժքույրերի կարողությունները զորացնելու, մյուս կողմից՝ առողջական խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, բնակչության շրջանում բուժօգնության դիմելու մշակույթը զարգացնելու և ԱԱՊ ծառայությունների նկատմամբ պահանջարկը բարձրացնելու միջոցով: ԱԱՊԲ ծրագրի վեց հիմնական բաղադրիչներն իրականացվում են «ԻնտրաՅելթ Ինթերնեյշնլ» կազմակերպության, Հայաստանի ամերիկյան համալսարանի, «Օվերսիզ Ստրաթիջիք Քոնսալթինգ» ընկերության և «Սոչլ Սեկտոր Դիվելփմենթ Ստրաթիջիք» կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում՝ ներառելով հետևյալ գործողությունները.

- **Բարեփոխումների ընդլայնում.** օժանդակության տրամադրում կառավարությանը հետագա բարեփոխումների համար բարենպաստ իրավական դաշտ ստեղծելու հարցում, հանրապետության տարածքում գործող ԱԱՊ հաստատությունների վերանորոգում և վերազինում, բուժհաստատությունների ղեկավարների համար կրթական դասընթացների մշակում և կազմակերպում:
- **Ընտանեկան բժշկություն.** Ժամանակակից կրթական ծրագրերի և նյութերի մշակում շարունակական բժշկական կրթության համար, ընտանեկան բժշկության անկախ խմբային պրակտիկաների հիմնում, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի ուսուցում:
- **Ազատ հավաքագրում.** ազատ հավաքագրման սկզբունքի ներդրում Հայաստանի առողջապահության համակարգում՝ բուժաշխատողների մրցակցության միջոցով սպասարկվողին ուղղված ծառայությունների զարգացմանը նպաստելու համար:
- **Բուժօգնության որակ.** բուժօգնության որակի բարձրացում որակի ժամանակակից ստանդարտների և որակի ապահովման գործընթացների ներդրման միջոցով, բուժաշխատողների լիցենզավորման և հավատարմագրման կանոնակարգերի ներդրում:
- **Առողջապահության ֆինանսավորում.** առողջապահությանը հատկացվող միջոցների բաշխման թափանցիկության և արդյունավետության բարձրացում ծառայությունների ինքնարժեքի հաշվարկի բարելավման և կատարողականի վրա հիմնված վարձատրության մեխանիզմների միջոցով, բուժհաստատությունների մակարդակում հաշվետվության գործընթացի բարելավում, Առողջապահության ազգային հաշիվների կիրառման սահմանում:
- **Բնակչության ուսուցում.** տրամադրվող ԱԱՊ ծառայությունների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության բարձրացում, հասարակության կողմից բժշկի ազատ ընտրության գործընթացի ըմբռնման և ընտանեկան

բժշկության գաղափարի ընկալման ապահովում, առողջ ապրելակերպի քարոզչություն և բուժօգնության դիմելու մշակույթի զարգացում:

Ծրագիրն իրականացվում է շրջանային ընդլայնման սկզբունքով, որը թույլ է տալիս ապահովել բարեփոխումների աստիճանական ընդլայնումը ծրագրի գործունեության ընթացքում: Ծրագրի առաջնահերթ խնդիրներն են յուրաքանչյուր շրջանում ընտրված բուժհաստատությունների ֆիզիկական պայմանների և բուժօժանայությունների տրամադրման բարելավումը: Այն համագործակցում է Հայաստանի տարբեր մարզերի մոտ երեք հարյուր բուժհաստատությունների հետ: Առաջին տարվա աշխատանքների համար ընտրվել են Լոռու և Շիրակի մարզերը:

Թիրախային բուժհաստատություններում ծրագիրը բազմակողմանի միջոցառումներ է իրականացնում, այդ թվում՝ վերանորոգում, կահավորում և սարքավորումների տրամադրում, ինչպես նաև բուժաշխատողների և վարչական անձնակազմի վերապատրաստում ընտանեկան բժշկության, բուժօգնության որակի, կառավարման, ֆինանսավորման/հաշվետվության վերաբերյալ, հաշվապահական համակարգչային ծրագրերի, ազատ հավաքագրման և ըստ կատարողականի վարձատրության համակարգերի ներդրում և այլն: Ծրագրի թիրախ են հանդիսանում նաև ընտրված բուժհաստատությունների կողմից սպասարկվող համայնքները, հատկապես ԱՄԴ ծրագրի բնակչության ուսուցման բաղադրիչի առումով, ինչը ենթադրում է այդ համայնքներում առողջապահական կոմիտեների հիմնում և օժանդակություն դրանց աշխատանքներին, փոքր դրամաշնորհների հատկացում և այլն: Սակայն, ընտրված ոչ բոլոր բուժհաստատություններում է, որ թվարկված միջոցառումներն իրականացվում են ողջ ծավալով. տարբեր բուժհաստատություններում ներդրվող միջոցառումների համալիրը կարող է տարբեր լինել կախված տեղի պահանջներից և առաջնահերթություններից:

1.2 ԱՄԴ ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան

Ծրագրի իրականացման մոնիտորինգի և արդյունավետության գնահատման նպատակով իրականացվում են միջոցառումները.

1) Ելակետային գնահատումներ, այդ թվում.

- Նախածրագրային գնահատումներ յուրաքանչյուր մարզի թիրախային բուժհաստատություններում, որոնք ներառում են. 1) հարցազրուցավարի կողմից կատարվող բուժհաստատության գնահատում, որն անդրադառնում է ծրագրի բոլոր բաղադրիչների կառուցվածքային չափորոշիչներին (դրանցից մի քանիսը ծրագրի Կատարողականի մոնիթորինգի պլանի չափորոշիչներ են), 2) բուժհաստատության կատարողականի ինքնագնահատում, որն անդրադառնում է բուժհաստատության և բուժաշխատողների գործունեությանը և կարող է հիմք հանդիսանալ բուժսպասարկման որակի բարելավման գնահատման համար, 3) սպասարկվողների բավարարվածության հարցում:
- Բնակչության ելակետային հարցում, այն է՝ ընտանիքների առողջության ուսումնասիրություն հանրապետության ողջ տարածքում, որն անդրադառնում է հարցվողների առողջական վիճակի և դրա փոփոխությունների ինքնագնահատմանը, վաղ ախտորոշիչ և կանխարգելիչ ծառայություններից օգտվելուն, բուժօգնության հասանելիությանը և հարցվողների կողմից բուժօգնության որակի գնահատմանը, ինչպես նաև

բնակչության առողջապահական կրթությանը (հանրային իրազեկման քարոզարշավների և համանման այլ միջոցառումների միջոցով, որոնց արդյունքում փոխվում են առողջության վերաբերյալ գիտելիքներն ու մոտեցումները, ինչպես նաև բուժօգնության դիմելու մշակույթը):

2) Միջանկյալ և վերջնական գնահատումներ, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի թիրախային բուժհաստատություններում ծրագրի աշխատանքների ավարտին կրկնակի անգամ կատարվում են վերոհիշյալ բոլոր գնահատումները:
- Բնակչության կրկնակի հարցում, որն անդրադառնում է ելակետային գնահատման մեջ ընդգրկված բոլոր ոլորտներին (կիրառվում են նույն հարցաշարերը):

Սույն հաշվետվությունն ամփոփում է Լոռու և Շիրակի մարզերի թիրախային բուժհաստատությունների կարողությունների գնահատման արդյունքները: Նշված բոլոր բուժհաստատություններն ԱԱՊԲ ծրագրի առաջին տարվա թիրախ են հանդիսանում: Ելակետային այս գնահատման արդյունքում հավաքված տվյալները հիմք են հանդիսանում ներքին պլանավորման և ելակետային տվյալների համակարգ ստեղծելու համար, որը հետագայում օգտագործվելու է 1-ին գոտում հետծրագրային գնահատման ժամանակ:

2. Մեթոդներ

Լոռու և Շիրակի մարզերի թիրախային բուժհաստատությունների ընտրությունը կատարվել է համատեղ՝ ԱԱՊԲ ծրագրի աշխատակիցների և համապատասխան մարզերի առողջապահական վարչությունների կողմից: Սկզբում ընտրվել են վերանորոգման և կահավորման կարիք ունեցող բուժհաստատությունները: Վերանորոգման ենթակա բուժհաստատությունների ընտրությունը կատարվել է հետևյալ երկու խումբ չափանիշների հիման վրա.

i) Գյուղական բուժհաստատությունների ընտրության չափանիշներ

- (1) Հեռավոր տեղակայում
- (2) Համայնքի մասնակցություն և տեղական իշխանությունների ներգրավվածություն
- (3) Հատկացված տարածքի / շենքի առկայություն
- (4) Անձնակազմի՝ վերանորոգման և վերապատրաստման աշխատանքներին մասնակցելու ցանկություն
- (5) Սպասարկվող բնակչության թիվ / բնութագիր (մեծ թիվ, ռիսկի խմբեր, անապահով բնակչություն)

ii) Պոլիկլինիկաների ընտրության չափանիշներ

- (1) Առաջնային բուժօգնության բարեփոխումների միջոցառումներին մասնակցելու հաջողված փորձ նախկինում
- (2) Հետագայում իբրև ուսումնական վայր ծառայելու հնարավորություն և/կամ կլինիկական դասավանդողների առկայություն
- (3) Անկախ իրավական կարգավիճակ, ընդգրկված չէ օպտիմալացման ծրագրում
- (4) Սպասարկվող բնակչության բնութագիր (ռիսկի խմբեր, անապահով բնակչություն):

Վերջնական ընտրությունը կատարվել է մարզերի առողջապահական վարչությունների կողմից առաջարկված վերանորոգման ենթակա բուժհաստատությունների շենքերի ճարտարագիտական գնահատումից հետո: Վերանորոգման կարիք ունեցող բուժհաստատությունների (հիմնականում՝ գյուղական բուժակ-մանկաբարձական կետեր (ԲՄԿ) և բժշկական ամբուլատորիաներ (ԲԱ)) ընտրությունից հետո, իբրև ծրագրի թիրախային հաստատություններ, ընդգրկվել են նաև այն բուժհաստատությունները, որոնց կցված են ընտրված ԲՄԿ-ներն ու ամբուլատորիաները (այսպես կոչված՝ «ուղեգրման հաստատությունները»)՝ ապահովելով ծրագրի համակցված, բազմակողմանի մոտեցման համապարփակ կիրառումը:

Ընտրված բուժհաստատություններում մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) թիմն իրականացրել է երկու տեսակի գնահատում՝ հարցազրուցավարի միջոցով բուժհաստատության գնահատում և բուժաշխատողների կատարողականի գնահատում, որն իրականացվել է տվյալ բուժհաստատության անձնակազմի ինքնագնահատման ձևով:

ԲՄԿ-ների և ԳԲԱ-ների ելակետային գնահատման համար կիրառվել է միևնույն հարցաշարը (Հավելված 1): Հաշվի առնելով պոլիկլինիկաների և առողջության կենտրոնների առաձևահատկությունները՝ մի փոքր այլ հարցաշար է կիրառվել վերոհիշյալների գնահատման համար (Հավելված 2): Երկու հարցաշարերն էլ ընդգրկել են հետևյալ հիմնական բաժինները.

- Բուժհաստատության կարգավիճակը և կառուցվածքը, այն է՝ անձնակազմը, ենթակառուցվածքները, սենյակները, սարքավորումներն ու կահույքը, դեղամատակարարման աղբյուրները, վերանորոգման վիճակը, ջրամատակարարումը, էլեկտրականության առկայությունը և ջեռուցումը, հեռավորությունները և փոխադրամիջոցները
- Բուժհաստատության ունեցած կարողություններն ու հնարավորությունները ԱԱՊԲ ծրագրի գործունեության հիմնական ոլորտներում՝ ընտանեկան բժշկության, բուժօգնության որակի, ազատ հավաքագրման, կառավարման ու ֆինանսավորման, աշխատուժի պլանավորման ու բնակչության առողջապահական կրթության
- Սպասարկվող բնակչության որոշ հիմնական առողջական ցուցանիշներ:

Գնահատումները կատարելու նպատակով յուրաքանչյուր մարզում ուսուցանվել է երեքական հարցազրուցավար (բոլորը եղել են տվյալ մարզի բժիշկներ): Ուսուցումը տևել է երկու օր և ներառել ինչպես տեսական բաղադրիչ, այնպես էլ՝ հարցաշարերի կիրառում գործնականում և հարցազրուցավարների/ հարցաշարերի նախնական փորձարկում: ԱԱՊԲ ծրագրի ՄԳ թիմը նշակել և հարցում կատարողներին է տրամադրել հարցման իրականացման վերաբերյալ ուղեցույց, ընտրված հաստատությունների ծածկագրերի ցուցակներ և հարցումների մոտավոր ժամանակացույց: Երկու մարզում էլ վարձվել են տեղական փոխադրամիջոցներ՝ հարցազրուցավարներին համապատասխան բուժհաստատություններ տանելու համար: Յուրաքանչյուր մարզում հարցումներն իրականացվել են մի քանի շաբաթվա ընթացքում (Լոռիում՝ 2006թ. մայիս-հունիսին, Շիրակում՝ 2006թ. հուլիսին): ՄԳ թիմը երկու մարզերում կատարել է հարցման գործընթացի ընտրողական ստուգումներ՝ հարցումների համապատասխանությունը հետազոտության ընթացակարգին ապահովելու համար:

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի (ԱԾՀԿ) տվյալներ մուտքագրող թիմը հավաքված տվյալները մուտքագրել է համակարգչային տվյալների բազա՝ օգտագործելով SPSS 11.0 ծրագիրը:

Բուժհաստատությունների ելակետային գնահատման այս փուլում հիմնականում կատարվել է նկարագրական վերլուծություն և կազմվել են յուրաքանչյուր բուժհաստատությանը վերաբերվող բազմազան տվյալներ պարունակող աղյուսակներ՝ ԱԱՊԲ ծրագրի տարբեր թիմերի առօրյա աշխատանքում օգտագործելու համար:

3. Արդյունքներ

2006թ.-ի մայիսի վերջից մինչև հունիս գնահատվել են ընդհանուր թվով 71 ԱԱՊ բուժաստատություններ (36-ը՝ Լոռու մարզում և 35-ը՝ Շիրակի մարզում): ՄԳ թիվը գնահատումը կատարել է թիրախային բուժաստատությունների նախնական ցանկի հիման վրա: Սակայն ճարտարագիտական գնահատումից հետո միայն 64 բուժաստատություն են մնացել որպես ծրագրի թիրախներ (Լոռու մարզի Ծաղկաշատի, Պուշկինոյի, Սվերդլովի ԲՄԿ-երը, Ուռուտի և Գարգառի ԲԱ-ները և Շիրակի մարզի Գյումրու թիվ 1 և 2 պոլիկլինիկաները հանվել են թիրախային բուժաստատությունների նախնական ցանկից): Այդուսակ 1-ում ներկայացված է առաջին գոտու երկու մարզում ընդգրկված թիրախային բուժաստատությունների վերջնական ցանկը:

Այդուսակ 1. ԱԱՊԲ ծրագրի թիրախային բուժաստատությունները Շիրակի և Լոռու մարզերում

	Շիրակի մարզում վերանորոգման համար ընտրված ԲՄԿ-երը	Շիրակի մարզում վերանորոգման ենթակա ԲՄԿ-երի ուղեգրման կենտրոնները		Լոռու մարզում վերանորոգման համար ընտրված ԲՄԿ-ները	Լոռու մարզում վերանորոգման ենթակա ԲՄԿ-երի ուղեգրման կենտրոնները
1.	Անուշավան	24. Փանիկի ԱԿ	1.	Շամուտ	22. Դսեղի ԱԿ
2.	Մեղրաշեն		2.	Լոռուտ	
3.	Կամո	25. Ջաջուռի ԲԱ	3.	Չորագյուղ	23. Վահագնի ԱԿ
4.	Շիրակ ¹		4.	Ֆիոլետովո	24. Մարագահովտի ԱԿ
5.	Կապս	26. Մարմարաշենի ԲԱ	5.	Լերմոնտովո	
6.	Վարդաքաղ	27. Հոռոմի ԲԱ	6.	Ղուրսալ	Սպիտակի ՊԿ*
7.	Լուսակերտ		7.	Լեռնանցք	
8.	Հովիտ	28. Ախուրյանի ՊԿ	8.	Հաղպատ	25. Ալավերդու ՊԿ
9.	Այգաբաց		9.	Ջիլիգա	
10.	Կառնուտ		10.	Խնկոյան	26. Մեծ Պարնիի ԱԿ
11.	Հովունի	29. Մայիսյանի ԲԱ	11.	Լուսաղբյուր	
12.	Առափի	30. Ախուրիկի ԲԱ	12.	Սարահարթ	27. Տաշիրի ՊԿ
13.	Բայանդուր		13.	Լեռնահովիտ	
14.	Ոսկեհասկ		14.	Մեղովկա	
15.	Բագրավան	31. Անի-Պենգայի ԱԿ	15.	Նովոսելցեվո	28. Ջրաշենի ԲԱ
16.	Ջրափի ¹	32. Աղինի ԱԿ	16.	Սարամեջ	
17.	Իսահակյան		17.	Թեղուտ	30. Կաթնաղբյուրի ԲԱ
18.	Շիրակավան		18.	Ուրասար	
19.	Լուսաղբյուր	33. Ամասիայի ԱԿ	Վերանորոգման ենթակա ՊԿ/ԲԱ-երը Լոռուում		
20.	Գառնառիճ		19.	Սպիտակի ՊԿ	
21.	Արեգնադեն		20.	Թունանյանի ԲԱ	
22.	Գտաշեն		21.	Լեռնապատի ԲԱ	
23.	Բանդիվան				

** Ընտրվել է նաև որպես վերանորոգման ենթակա հաստատություն*

¹ Շիրակի և Ջրափիի ԲՄԿ-երը հանվել են թիրախային բուժաստատությունների ցանկից տվյալների ելակետային հավաքագրումից և վերլուծությունից հետո

3.1 Կառուցվածք, կարողություններ, անձնակազմ

Անձնակազմը

Թիրախային 64 բուժհաստատություններում աշխատել են ընդհանուր թվով 180 բժիշկ, 338 բուժքույր, 28 մանկաբարձուհի/բուժակ, 45 սանիտար և 90 ոչ բժշկական աշխատողներ: Ընդհանուր պրակտիկայում (ԸՊ՝ ընտանեկան բժշկություն, թերապևտիկ և մանկաբուժական ծառայություններ) ներգրավված են եղել ընդհանուր թվով 272 բժիշկ, որոնցից 19-ը՝ ընտանեկան բժիշկ, 44-ը՝ թերապևտ, 34-ը՝ մանկաբույժ, 21-ը՝ մանկաբարձուհի/բուժակ, 133-ը՝ տեղամասային բուժքույր և 21-ը՝ ընտանեկան բուժքույր: Թիրախային բուժհաստատություններում աշխատող ընտանեկան բժիշկների միջին տարիքը եղել է 41.6՝ 31-55 տատանման տիրույթով, թերապևտներինը՝ 51.2 (25-82 տատանման տիրույթով), իսկ մանկաբույժներինը՝ 46.2 (30-83 տատանման տիրույթով): Ընտանեկան բուժքույրերի միջին տարիքը չի տարբերվել մյուս ԸՊ բուժքույրերի միջին տարիքից, այն է՝ համապատասխանաբար 44.7 և 44.6: Սակայն, ընտանեկան բուժքույրերի տարիքի տատանման տիրույթն ավելի փոքր է եղել, քան ԸՊ բուժքույրերինը (33-56 և 25-65 համապատասխանաբար): ԲՄԿ-երի մեծ մասի (41 ԲՄԿ-ից 33-ի) անձնակազմը բաղկացած է եղել ընդամենը մեկ բուժքրոջից կամ մանկաբարձուհուց: Թիրախային բուժհաստատությունների անձնակազմի կազմությունը ներկայացված է հավելված 3-ում:

Բուժհաստատության սեփականության իրավունքը

Բուժհաստատության շենքի սեփականության իրավունք ունեցել է միայն 12 ԲՄԿ: Մյուսները վարձակալել են իրենց տարածքը, որպես կանոն, գյուղապետարանից (վարձավճարով կամ առանց դրա): Ի տարբերություն ԲՄԿ-երի, միայն մեկ ամբուլատորիա է վարձակալել տարածքը գյուղապետարանից (Լոռու մարզի Կաթնաղբյուրի ԲԱ-ն): Մյուս ամբուլատորիաները, ինչպես նաև պոլիկլինիկաները և առողջության կենտրոնները հանդիսացել են իրենց շենքերի սեփականատերերը (հավելված 4):

Սենյակները

Գնահատված 41 ԲՄԿ-ից 26-ը (63.4%) ունեցել են միայն մեկ օգտագործվող սենյակ, իսկ ութ ԲՄԿ (19.5%)՝ երկու սենյակ: Օգտագործվող սենյակների միջին թիվը կազմել է 1.5՝ ԲՄԿ-երում (0-6 տատանման տիրույթով) և 5.9՝ ամբուլատորիաներում (1-9 տատանման տիրույթով): Սենյակների (օգտագործվող և չօգտագործվող) ընդհանուր թիվն ըստ հաստատության տեսակի տատանվել է ԲՄԿ-երում՝ 0-ից 10-ի սահմաններում (միջինը՝ 2.3), ամբուլատորիաներում՝ 6-ից 10-ի (միջինը՝ 8.3): ԲՄԿ-երի 75%-ում գնման սենյակները վերանորոգված չեն եղել: Գնահատված ԲՄԿ-երի 82%-ում հիմնական/զննման սենյակների լուսավորությունը գնահատվել է բավարար: ԲՄԿ-երի հիմնական/զննման սենյակի միջին մակերեսը կազմել է 18 մ², 6 - 40մ² տատանման տիրույթով: Մյուս սենյակները (եթե այդպիսիք եղել են) ավելի փոքր եղել. դրանց միջին մակերեսը տատանվել է 9-17 մ² սահմաններում: Ամբուլատորիաներում սենյակների վերանորոգումը գնահատվել է բավարար 44% դեպքում, իսկ լուսավորությունը բավարար է եղել 80% դեպքերում: Գնահատված ամբուլատորիաների սենյակների միջին մակերեսը եղել է 16 մ², 6-40 մ² տատանման տիրույթով:

Պոլիկլինիկաներում (ՊԿ) և առողջության կենտրոններում տեղեկություններ են հավաքվել միայն ընդհանուր պրակտիկայում (ԸՊ) օգտագործվող կաբինետների/ սենյակների վերաբերյալ, ներառյալ ընտանեկան բժիշկների,

թերապևտների և մանկաբույժների կաբինետները: Ընդհանուր թվով, 13 պոլիկլինիկաներում և ԱԿ-ներում գնահատվել է 52 ԸՊ կաբինետ, որոնցից 46-ը բաղկացած են եղել մեկ սենյակից, հինգը՝ երկու սենյակից և մեկը՝ երեք սենյակից: Պոլիկլինիկաներում ԸՊ կաբինետների միջին թիվը կազմել է 7.8՝ 5-ից 11 տատանման տիրույթով: Առողջության կենտրոնների ԸՊ կաբինետների միջին թիվը եղել է 2.4՝ 1-ից 4 տատանման տիրույթով: Ի տարբերություն ԲՄԿ-երի՝ վերանորոգման վիճակը գնահատվել է բավարար ՊԿ և ԱԿ կաբինետների 71.2% - ում: Լուսավորությունը բավարար է գնահատվել բոլոր 52 կաբինետներում: Այս բուժհաստատությունների զննման սենյակների միջին մակերեսը եղել է 15 մ² (7.5-35 մ² տատանման տիրույթով) (հավելված 4):

Էլեկտրամատակարարումը, ջեռուցումը, փոխադրամիջոցները

Շուրջօրյա էլեկտրամատակարարում կար գնահատված ԲՄԿ-երի միայն 75%-ում և ամբուլատորիաների 90%-ում: Էլեկտրամատակարարումից զրկված էին 9 ԲՄԿ և մեկ ամբուլատորիա (Կաթնաղբյուր), մեկ ԲՄԿ-ում էլեկտրաէներգիա մատակարարվում էր օրական հինգ ժամ: Գնահատված ԲՄԿ-երում (22 ԲՄԿ) առավել հաճախ սենյակները տաքացնելու համար օգտագործվում էին շարժական էլեկտրական ջեռուցիչներ: Ծխնելույզով վառարաններ օգտագործվում էին 5 ԲՄԿ-երում: Գնահատված ԲՄԿ-երի համարյա 20%-ում (8 ԲՄԿ) և մեկ ամբուլատորիայում (Կաթնաղբյուր) ձմռանը սենյակները չէին ջեռուցվում:

Գնահատված 10 ամբուլատորիաներից երեքը (Շնող, Մայիսյան և Ջաջուռ) ունեին մեկական ավտոմեքենա: ԲՄԿ-երում ավտոմեքենա չկար:

Բոլոր 5 պոլիկլինիկաներն ու 8 առողջության կենտրոններն ունեին շուրջօրյա էլեկտրամատակարարում: Պոլիկլինիկաների և առողջության կենտրոնների ԸՊ համարյա բոլոր սենյակները ձմռան ընթացքում ջեռուցվում էին: Սենյակները տաքացնելու համար հիմնականում օգտագործվում էին շարժական էլեկտրական ջեռուցիչներ: Սարքին ավտոմեքենա կար միայն երեք պոլիկլինիկայում (յուրաքանչյուրն ուներ 2-ը) և չորս առողջության կենտրոններում (յուրաքանչյուրն ուներ 1 ավտոմեքենա) (հավելված 4):

Դեղամատակարարումը

ԲՄԿ-երի տեղակայման 41 գյուղերից և ոչ մեկում չկար գործող դեղատուն: Միայն մեկ ամբուլատորիա էր ունեւ, որ նույն գյուղում կա դեղատուն (Լոռու մարզի Շնող գյուղ): Գնահատված բոլոր բուժհաստատությունների համար դեղերի հիմնական մատակարարը ԱՆ էր: Վերջինս ծածկում էր անհրաժեշտ դեղամիջոցների ցանկում ընդգրկված դեղերի կարիքի 10-100%-ը: Տասը բուժհաստատություն դեղեր էին ստանում ԱՄԿՈՐ-ից, 6-ը՝ «Հիպոկրատի հիմնադրամից», 5-ը՝ ՄՕԶ-ից, 2-ը՝ ՆՕՎԱ-ից («Vitrum» հաբեր), 1-ը՝ ՈՒՎ-ից, 1-ը՝ ԲԱՍ-ից, ԴՕԹՍ-ից և 1-ը՝ գյուղապետարանից: Դեղերի առանձին տեսակների համար կարիքի ծածկման տոկոսի առումով այս աղբյուրները տարբեր նշանակություն ունեին և ապահովում էին կարիքի 2%-ից 100%-ը: Այս աղբյուրներից մատակարարումների հաճախականությունը տատանվում էր ամիսը մեկ անգամից մինչև տարին մեկ անգամ:

Մատակարարվող դեղերի ցանկերը վերցվել են 54 բուժհաստատություններից: Դրանցում ներառված են եղել ընդհանուր թվով 284 անուն տարբեր դեղեր: Առավել հաճախ թվարկվածներից են եղել դիբազոլը, անալգինը, պապավերինը, դիմեդոլը, ասպիրինը, պարացետամոլը և դեքսամետազոնը, որոնք նշվել են ավելի քան երեսուն բուժհաստատությունների ցուցակներում: Դրանց հաջորդել են յոդը, ֆուրոսեմիդը, էուֆիլինը, նոշպան,

կատվախտը, կալցիումի քլորիդը, կորդիամինը և կլոտրիմազոլը, որոնք ներառված են եղել 20-30 բուժհաստատությունների ցանկերում:

Ախտորիկի և Յոռոմի ամբուլատորիաները, ինչպես նաև Ամասիայի ԱԿ-ը կանոնավորապես ստացել են յոթանասունից ավելի դեղատեսակներ, մինչդեռ իննը ԲՄԿ (Մոդովկա, Լեռնահովիտ, Ուրասար, Արեգնադեմ, Բագրավան, Սարամեջ, Ջիլիզա, Խնկոյան, Ջորագյուղ) ստացել են ոչ ավելի, քան տասը տարբեր դեղատեսակներ: Դեղերի մեծ տեսականի ստացող հաստատությունները, սովորաբար, մեկից ավելի դեղամատակարարման աղբյուրներից են օգտվել (ԱՆ, ՄՕԶ, ԱՄԿՈՐ և ՄԱԿ ՄՅ տարբեր համակցումներ): Ամենից քիչ տեսականի ստացողները, սովորաբար, դեղեր են ստացել միայն ԱՆ-ից:

Կահույքը և սարքավորումները

Առկա սարքավորումների և դրանց պիտանիության մասին մանրամասն տեղեկություններ են հավաքվել բոլոր գնահատված բուժհաստատություններից: Դրանք ամփոփված են հավելված 5-ում (ԲՄԿ-եր և ամբուլատորիաներ) և հավելված 6-ում (պոլիկլինիկաներ և ԱԿ-ներ): Այն հաստատություններում, որտեղ գործում են կլինիկական/բիոքիմիական լաբորատորիաներ, հավաքվել են նաև լաբորատոր սարքավորումների մասին տեղեկություններ (հավելված 7): Ներկայացված ամփոփ տեղեկություններում ներառված են միայն օգտագործման համար պիտանի սարքավորումները: Թիրախային բուժհաստատություններում առկա կահույքի (օգտագործման համար պիտանի) մասին ամփոփ տեղեկություններն ըստ առանձին հաստատությունների ներկայացված են հավելված 8-ում: Ինչպես երևում է հավելվածներից, համարյա բոլոր հաստատություններն ունեցել են կահավորման և սարքավորումներով հագեցվածության անբավարար մակարդակ: ԲՄԿ-երի վիճակն այս առումով եղել է ամենածանրը:

Ջուր, սանհանգույց (զուգարան)

Գնահատված 51 ԲՄԿ-երից և ամբուլատորիաներից 34 ԲՄԿ և 1 ԲԱ (Յոռոմի) նշել են, որ իրենց բուժհաստատությունում չկա սանհանգույց/զուգարան: Բուժհաստատության ներսում սանհանգույց/զուգարան ունեցող 15 բուժհաստատություններից միայն յոթում է այն գործել (բոլորն էլ՝ ամբուլատորիաներում) և միայն 5-ում է եղել շուրջօրյա ջրամատակարարում: Լվացարաններ չեն եղել 25 ԲՄԿ-երում և 1 ԲԱ-ում (Կաթնաղբյուր): Մեկ լվացարանի առկայության մասին նշել է 15 բուժհաստատություն, երկուսի և ավելիի՝ 9 բուժհաստատություն: Սակայն, նշվածներից միայն 8-ում են դրանք գործել և միայն 7-ում է եղել շուրջօրյա ջրամատակարարում: Ցնցուղ եղել է միայն երկու բուժհաստատությունում (Ջրաշենի և Յովունու ամբուլատորիաներում), որոնցից միայն մեկն է գործել (Ջրաշեն): Կոյուղի եղել է միայն 2 ԲՄԿ-ում և 9 ԳԲԱ-ում:

Գնահատված 13 պոլիկլինիկաներից և առողջության կենտրոններից միայն Անիպենգայի ԱԿ-ում չի եղել սանհանգույց/զուգարան: Գնահատված բուժհաստատություններում սանհանգույցների միջին թիվը կազմել է 3.5՝ 0-15 տատանման տիրույթով, և բոլորն էլ եղել են շենքի ներսում: Սանհանգույցները գործել են 11 բուժհաստատություններում, որոնցից 6-ում եղել է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ մյուս 5-ում ջուրը մատակարարվել է օրական 4-12 ժամ:

Յուրաքանչյուր/փոխադրամիջոցներ

Որպես գյուղերը մարզկենտրոնին և շրջանային հիվանդանոցին կապող միակ փոխադրամիջոց նշվել է ավտոբուսը: Սակայն, 3 գյուղերում չի եղել մարզկենտրոնի, իսկ հինգում՝ շրջանային հիվանդանոցի հետ կապող հանրային

փոխադրամիջոց: Տասնութ գյուղում չի եղել հանրային փոխադրամիջոց՝ մոտակա ամբուլատորիա հասնելու համար:

Մարզկենտրոնի, շրջկենտրոնի և մոտակա ամբուլատորիայի հետ գյուղը կապող ճանապարհները գնահատված գյուղերի 60%-ում բնութագրվել են որպես “մեծ փոսերով հող”, իսկ 12%-ում՝ որպես “խորդուբորդ հող”: Գնահատված ԲՄԿ/ամբուլատորիաների և դրանց մարզկենտրոնների միջև միջին հեռավորությունը եղել է 34.6 կմ՝ 4-87 կմ տատանման տիրույթով, դրանց և շրջանային հիվանդանոցների միջև՝ 21.4 կմ՝ 4-65 կմ տատանման տիրույթով, իսկ դրանց և մոտակա ամբուլատորիայի միջև՝ 12.2 կմ՝ 2-40 կմ տատանման տիրույթով: Այս հեռավորությունների և դեպի մարզկենտրոն տանող առկա փոխադրամիջոցների մասին ըստ հաստատությունների տեղեկությունները ներկայացված են հավելված 9-ում:

3.2 Ընտանեկան բժշկություն

Գնահատված 64 բուժհաստատությունների բոլոր ԱԱՊ բժիշկների 28.0%-ն անցած հինգ տարվա ընթացքում վերապատրաստվել են Առողջապահության ազգային ինստիտուտում (ԱԱԻ) կամ Երևանի պետական բժշկական համալսարանում (ԵՊԲՀ), իսկ 28.9%-ը՝ ընտանեկան բժշկության (ԸԲ) շարունակական կրթություն ստանալու ցանկություն է հայտնել կամ ընդգրկված է եղել շարունակական դասընթացներում: Շարունակական ընտանեկան բուժքույրության (ԸԲք) դասընթացներում ընդգրկված կամ ընդգրկվելու ցանկություն հայտնած բուժքույրերի թիվը մի փոքր ավելի մեծ է եղել: Լոռու և Շիրակի մարզերի թիրախային բուժհաստատություններում աշխատող ԱԱՊ 175 բուժքույրերից 57-ը (32.3%) անցած հինգ տարվա ընթացքում վերապատրաստվել են ԱԱԻ-ում կամ Բազային բժշկական քոլեջում (ԲԲՔ), իսկ 65 բուժքույր (37.1%) ընդգրկված է եղել ընտանեկան բուժքույրության շարունակական կրթության դասընթացներում կամ ցանկացել է ընդգրկվել: ԸԲ/ԸԲք վերապատրաստվածների կամ նման ցանկություն հայտնածների թվի մասին տեղեկություններն ըստ հաստատությունների ներկայացված են Հավելված 10-ում:

Գնահատված հաստատությունների աշխատողներին հարց է տրվել, թե անցած հինգ տարվա ընթացքում մասնակցել են արդյոք հետևյալ թեմաներով կարճաժամկետ կլինիկական վերապատրաստման դասընթացների. առաջին բուժօգնություն, պատվաստումներ (իմունականխարգելում), կրծքով սնուցում, սեռավարակներ (ՍՎ), վերարտադրողական առողջություն, մանկական հիվանդությունների ինտեգրված վարում (ՄՅԻՎ), պալարախտ (տուբերկուլոզ), առողջ ապրելակերպ, և առողջ երեխայի աճ և զարգացում: Այս թեմաներն ընտրվել են, քանի որ նախորդ մի քանի տարվա ընթացքում դրանք եղել են բազմաթիվ կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Տեղեկություններ են հավաքվել նաև նույն ժամանակահատվածում այլ թեմաներով կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների մասնակցության մասին:

Բժիշկների շրջանում ամենատարածված դասընթացներն ուղղված են եղել իմունականխարգելմանը, կրծքով սնուցմանը և ՄՅԻՎ-ին (մասնակցել է, համապատասխանաբար, բժիշկների 39.2%-ը, 35.1%-ը և 22.7%-ը): Ամենից քիչ տարածված դասընթացները եղել են պալարախտի (6.2%) և վերարտադրողական առողջության (9.3%) վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, բուժաշխատողների ընդգրկվածությունը կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներում եղել է բավականին ցածր: Վերջին հինգ տարվա ընթացքում որևէ դասընթացի չի մասնակցել թիրախային բուժհաստատությունների բժիշկների գրեթե կեսը:

Կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներում բուժքույրերի ընդգրկվածությունը եղել է փոքր-ինչ ավելի բարձր: Առավել տարածված դասընթացները եղել են ինունականխարգելումը (մասնակցել է բուժքույրերի 52.6%-ը) և կրծքով սնուցումը (47.4%-ը): ԲՄԿ-երում կան ամբուլատորիաներում աշխատող ոչ մի բուժքույր չի մասնակցել պալարախտի վերաբերյալ դասընթացի:

Առաջին օգնության թեմայով վերապատրաստման դասընթացները հիմնականում անցկացրել են ՆՕՎԱ-ն, ԱԱԻ-ը, Փրայմ II-ը և ՅՄԲԾ-ը: Ինունականխարգելման, կրծքով սնուցման և ՄՅԻՎ-ի թեմաներով վերապատրաստման դասընթացներն անցկացրել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՄԱԿ ՄՅ) և ՆՕՎԱ-ն, սեռավարակների (ՍՎ) և վերարտադրողական առողջության վերաբերյալ՝ Փրայմ II-ը և ՆՕՎԱ-ն, պալարախտի վերաբերյալ՝ ՄԱԿ ՄՅ-ը, ՆՕՎԱ-ն և Վորլդ Վիժնը (ՎՎ), առողջ ապրելակերպի և առողջ երեխայի աճի և զարգացման թեմաներով՝ ՆՕՎԱ-ն, ՅՄԲԾ-ը, ՄԱԿ ՄՅ-ը, ՎՎ-ը և Փրայմ II-ը:

Բժիշկների 35%-ը և բուժքույրերի 29.7%-ը նշել են անցած հինգ տարվա ընթացքում բուժաշխատողների համար անցկացված որևէ այլ կարճաժամկետ վերապատրաստման դասընթացի մասնակցելու մասին: Նշված դասընթացները եղել են առողջ մայրության և մանկության, ընտանիքի պլանավորման, հաղորդակցվելու հմտությունների, դեղագործության, ինֆեկցիոն հիվանդությունների և այլ թեմաներով: Ինչևէ, նշված դասընթացներում բուժաշխատողների ընդգրկվածությունը եղել է բավականին ցածր: Որպես այս դասընթացների կազմակերպիչներ ավելի հաճախ նշվել են ԱԱԻ-ը, ՍՕԶ-ը, ՅՄԲԾ-ը, ԱՆ-ը, ՄԱԿ ՄՅ-ը, ՎՎ-ը և ԱՅԿ-ը:

Հավելված 11-ում ներկայացված են անցած հինգ տարվա ընթացքում կարճաժամկետ կլինիկական վերապատրաստման դասընթացներին մասնակցած Լոռու և Շիրակի մարզերի թիրախային բուժհաստատություններում աշխատող բժիշկների և բուժքույրերի թվերը և տոկոսները՝ ըստ դասընթացների թեմաների:

Գնահատված 51 ԲՄԿ-ից և ամբուլատորիաներից 15-ը (29.4%) նշել են, որ իրենց աշխատողները (հիմնականում՝ տեղամասային բուժքույրեր) ունեն աշխատանքի նկարագրություններ, իսկ գնահատված պոլիկլինիկաների/ԱԿ-ների 84.6%-ում եղել են թե՛ բժիշկների, թե՛ բուժքույրերի աշխատանքի նկարագրություններ:

Համաաշխարհային բանկի (ՀԲ) կողմից բժիշկների համար կազմված կլինիկական գործունեության ուղեցույցների ամբողջ փաթեթի (15 հատոր) մեկ կամ ավելի օրինակներ եղել են 6 ամբուլատորիաներում (գնահատված 10-ից) և բոլոր գնահատված պոլիկլինիկաներում և առողջության կենտրոններում: Տասնմեկ պոլիկլինիկաներում և առողջության կենտրոններում (գնահատված 13-ից), 4 ամբուլատորիաներում (գնահատված 10-ից) և միայն մեկ ԲՄԿ-ում (գնահատված 41-ից) եղել է ՀԲ կողմից բուժքույրերի համար մշակված կլինիկական գործունեության ուղեցույցների ամբողջական փաթեթը (5 հատոր): Հինգ ԲՄԿ և 3 ամբուլատորիա նշել են, որ ունեն բուժքույրերի համար նախատեսված ուղեցույցի 1-ից 3 հատոր:

Գնահատված բուժհաստատություններում առկա այլ կլինիկական գործունեության ուղեցույցների թվում հաճախ նշվել են նաև տարբեր կարճաժամկետ դասընթացների (ինունականխարգելում, ՄՅԻՎ, ՍՇՎ, փորլուծություն, կրծքով սնուցում, վերարտադրողական առողջություն /ընտանիքի պլանավորում) ժամանակ բաշխված տպագիր նյութերը: Գնահատված հաստատություններում առկա նյութերի մեծ մասը վերաբերվել են մոր և մանկան խնամքին, այն է՝ առողջ հղիություն, նախածննդյան խնամքի սկզբունքները, նորածնի վարումը, նորածնի խնամքը, առաջին բուժօգնությունը երեխաներին, երեխաների սնուցում, մոր և մանկան խնամքի կլինիկական հմտություններ, առողջ

և հիվանդ երեխաների խնամքը, երեխաների առողջության առաջնային պահպանման ուղեցույց, առողջ երեխայի աճը և զարգացումը և այլն: Մի քանի բուժհաստատություն նշել են այլ թեմաներով նյութերի առկայությունը, օրինակ՝ շաքարային դիաբետի վարում, հիպերտոնիկ հիվանդների վարում, ՍՎ վարման ուղեցույց, 40տ. և բարձր տարիքի կանանց շրջանում կրծքագեղձի քաղցկեղի սկրինինգ և այլն: Թվարկվել են նաև այլ ընդհանուր բնույթի ուղեցույցներ, օրինակ՝ պրակտիկ բժիշկների համար ուղեցույց, ծառայությունների մատուցման մասին ուղեցույց, հիվանդի խնամք և այլն: Այս նյութերը տրամադրողների թվում նշվել են բազմաթիվ կազմակերպություններ, օրինակ՝ ՀԱԲԾ, ՋՀՀ, ԱՆ, ՆՕՎԱ, Փրայմ II, ՄԱԿ ՄՀ, ԱՀԿ, ԱՄԿՈՐ, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԿ ԲՀ, ԱԱԻ և ԲՀԻ:

Աղյուսակ 2-ում ներկայացված են ամփոփ տեղեկություններ թիրախային բուժհաստատություններում ապացուցողական բժշկության և դեղերի մասին տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորությունների մասին:

Աղյուսակ 2. Ապացուցողական բժշկության վերաբերյալ նյութերի և դեղերի մասին տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորությունները թիրախային բուժհաստատություններում

Կարող են օգտվել հետևյալից	ՊԿ/ԱԿ (n=13)	ԳԲԱ (n=10)	ԲՄԿ (n=41)
Ինտերնետ	1	1	1
Բժշկական ամսագրեր	11	6	8
Վերապատրաստման թարմ նյութեր	12	9	35
Պարբերականներ	11	4	7
Ապացուցողական բժշկության հրատարակություններ	5	1	1
Բժշկական գրքեր (2000թ.-ից ի վեր տպագրված)	11	6	8
Մաշկովակի, “Դեղամիջոցներ”	1	6	0
Վիդեո, “Դեղերի ուղեցույց”	7	2	0
Վիդեո, “Դեղերի ուղեցույց Անդրկովկասի համար”	11	5	0
Դեղաբուժության օպտիմալ սխեմաների ձեռնարկ,ՀՀ ԱՆ ԴԲՏՓԿ	8	3	1

Ինչպես երևում է աղյուսակից, հաստատությունների մեծ մասն ունի վերապատրաստման թարմ նյութեր: Բժշկական ամսագրերը և ապացուցողական բժշկության վերաբերյալ հրատարակություններն ավելի քիչ են: Ինտերնետից օգտվելու հնարավորություն համարյա չկա: Դեղերի մասին տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորությունը նույնպես սահմանափակ է: Մի քանի հաստատությունների ղեկավարներ/պատասխանատուներ նշել են, որ ունեն դեղերի մասին տեղեկատվական այլ աղբյուրներ, որոնք նշված չեն հարցաշարում, ինչպես, օրինակ՝ “Դեղեր և դեղորայքային բուժում”, “Դեղաբուժության ուղեցույց բժիշկների և դեղագետների համար”, “Դեղաբանական ուղեցույց բուժման և դեղերի վերաբերյալ” և “Բուժման ուղեցույցներ Գեղեոն Ռիստերից”:

Բոլոր գնահատված բուժհաստատությունները վարել են բժշկական քարտեր մինչև 18 տարեկանների համար: Այս տարիքային խմբի ընդգրկումն այդ քարտերով կազմել է 90-100% (միջինը 99.4%): Այդ քարտերում գրանցված տեղեկությունները գնահատվել են “լիարժեք” ԲՄԿ-երի 94.9%-ում, ամբուլատորիաների 100%-ում և ՊԿ/առողջության կենտրոնների 75%-ում (գնահատումն ամբողջովին հիմնված է եղել գնահատողների սուբյեկտիվ կարծիքի վրա): Գնահատված ԲՄԿ-երի 71.8%-ը, ամբուլատորիաների 87.5%-ը, և պոլիկլինիկաների/ առողջության կենտրոնների 83.3%-ը կիրառել է բժշկական քարտերի ստանդարտ ձևեր:

Մեծահասակ (≥ 18 տարեկան) բնակչության համար բժշկական քարտեր լրացվել են գնահատված ԲՄԿ-երի 71.4%-ում և բոլոր ամբուլատորիաներում և պոլիկլինիկաներում/առողջության կոնտրոլներում: Մեծահասակ բնակչության ընդգրկվածությունը բժշկական քարտերով ավելի փոքր է եղել. միջինում՝ 46.4% ԲՄԿ-երում, 78.0%՝ ամբուլատորիաներում և 77.9%՝ ՊԿ/ԱԿ-ներում: Քարտերում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» գնահատված ԲՄԿ-երի 54.8%-ում, ամբուլատորիաների 100%-ում և ՊԿ/ԱԿ-ների 76.9%-ում: Բժշկական քարտերի ստանդարտ ձևեր կիրառել են ԲՄԿ-երի և ամբուլատորիաների 57.1%-ը և ՊԿ/ԱԿ-ների 92.3%-ը:

Պատվաստումների ձևեր կիրառվել են գնահատված ԲՄԿ-երի 92.5%-ում, ամբուլատորիաների 100%-ում և պոլիկլինիկաների/ԱԿ-ների 91.7%-ում: Այդ ձևերում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» ԲՄԿ-երի 90.0%-ում և բոլոր ամբուլատորիաներում, պոլիկլինիկաներում և ԱԿ-երում: Պատվաստումների ստանդարտ ձևեր կիրառվել են ԲՄԿ-երի 82.9%-ում, ամբուլատորիաների 87.5%-ում և ՊԿ/ԱԿ-ների 90.9%-ում: Այս ձևերի միջոցով բնակչության համապատասխան խմբի ընդգրկվածությունը ԲՄԿ-երում եղել է 89.7%, ամբուլատորիաներում՝ 88.2%, իսկ պոլիկլինիկաներում/ԱԿ-ներում 100.0%:

Քառասունմեկ ԲՄԿ-երից 38-ը վարում էր ամբուլատոր այցերի մատյաններ, իսկ 30-ը՝ տնային այցերի մատյաններ: Ամբուլատոր մատյաններում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» ԲՄԿ-երի 78.9%-ում, իսկ տնային այցերի մատյանում գրանցված տեղեկությունները համարվել են «լիարժեք» ԲՄԿ-երի 61.1%-ում: Բոլոր գնահատված ամբուլատորիաները վարել են նշված երկու մատյանները և դրանցում գրանցված տեղեկությունները բոլոր ամբուլատորիաներում գնահատվել են որպես «լիարժեք»: Գնահատված պոլիկլինիկաներից և առողջության կենտրոններից միայն Անիպենզաի ԱԿ-ում չկար վերոհիշյալ մատյաններից ոչ մեկը: Գնահատված պոլիկլինիկաների/ԱԿ-ների 66.7%-ում վարած մատյաններում գրանցված տեղեկությունները համարվել են «լիարժեք»: Շտապ օգնության կանչերի մատյան վարել են միայն մեկ ԲՄԿ, երեք ամբուլատորիա և երկու ԱԿ:

Գնահատված ԲՄԿ-ներից և ամբուլատորիաներից ոչ մեկում չի եղել որակի ապահովման գործող մեխանիզմ: Սակայն դրանցից երեքը նշել են, որ բուժհաստատությունում գործում է որակի ապահովման մեխանիզմ, որն է՝ «գրառումները կանոնավոր ստուգելը» կամ «կատարած աշխատանքի մասին զեկուցելը»: Գնահատված 13 ՊԿ/ԱԿ-ներից 4-ը նշել են հաստատությունում որակի ապահովման մեխանիզմի առկայության մասին: Դրանցից երկուսը (Դսեղի և Ամասիայի ԱԿ-ները) նշել են իրենց բուժհաստատությունում որակի ապահովման հանձնաժողովի գոյության մասին: Մյուսները նկարագրել են որակի ապահովման մեխանիզմը հիմնականում որպես ամբուլատոր քարտերի պարբերական ստուգումների իրականացում և բացահայտված թերությունների քննարկում:

Անցած երեք ամիսների ընթացքում վերահսկողները միջինում 2.8 վերահսկողական այց են կատարել ԲՄԿ-եր: Չորս ԲՄԿ, որը կազմում է գնահատվածների 10.5%-ը (Շիրակում՝ Բանդիվան, Կառնուտ և Գառնառիճ և Լոռում՝ Ջիլիզա) նշել են, որ անցած եռամսյակում իրենց բուժհաստատություն որևէ վերահսկողական այց չի կատարվել, իսկ 8 ԲՄԿ (21.1%) նշել են, որ այդ ընթացքում կատարվել է միայն մեկ այց:

ԲՄԿ-երից ոչ մեկում չի եղել համակարգիչ: Գնահատված տասը ամբուլատորիաներից յուրաքանչյուրում եղել է մեկական գործող համակարգիչ (մեկում եղել է չգործող համակարգիչ): Միայն երկու ամբուլատորիայում է եղել համակարգչային ծրագիր՝ կլինիկական տվյալների մուտքագրման և

վերլուծության համար: Լոռու մարզի Թումանյանի բժշկական կենտրոնը այն ստացել է ՅՄԲԾ-ից, իսկ Ջրաշատի ամբուլատորիան՝ ԱՆ-ից:

Գնահատված ՊԿ-երից և ԱԿ-ներից միայն մեկը (Անիպենզայի ԱԿ) չի ունեցել համակարգիչ, իսկ մյուսը՝ Ալավերդու ՊԿ, չի ունեցել չգործող համակարգիչ: Ութ ՊԿ/ԱԿ-ում եղել են մեկական համակարգիչ, Տաշիրի ՊԿ-ում՝ 2, Ստեփանավանի ՊԿ-ում և Դսեղի ԱԿ-ում՝ երեքական: Վեց ՊԿ/ԱԿ նշել են, որ ունեն համակարգչային ծրագիր՝ կլինիկական տվյալների մուտքագրման և վերլուծության համար: ՅՄԲԾ-ը այդ ծրագիրը տրամադրել էր դրանցից երեքին (Դսեղի, Վահագնի ԱԿ-եր և Տաշիրի ՊԿ), ԱՆ-ը՝ մեկին (Սպիտակի ՊԿ) և Մերգեյանի գիտահետազոտական ինստիտուտը՝ մյուս երկուսին (Ախուրյանի ԱԿ և Ամասիայի ՊԿ):

3.3 Ազատ հավաքագրում, ֆինանսավորում և կառավարում

Միայն ՅՄԲԾ փորձարարական բուժհաստատությունները՝ Դսեղի և Վահագնի ԱԿ-ն ու Թումանյանի ԲԿ-ն են նշել, որ ունեն ազատ հավաքագրման համար համակարգչային ծրագիր, որը տրամադրվել է ՅՄԲԾ կողմից: Այս բուժհաստատություններից յուրաքանչյուրում եղել են ազատ հավաքագրման համար վերապատրաստված օպերատորներ (երկուսը՝ Թումանյանի ԲԿ-ում, մեկը՝ Վահագնի և երեքը՝ Դսեղի ԱԿ-ներում): Ինչպես ակնկալվում էր, միայն այս երեք բուժհաստատությունները և դրանց ցանցում ընդգրկված երեք ԲՄԿ-երն (Չորաղբյուրի ԲՄԿ՝ Վահագնի ԱԿ-ի ցանցում և Շամուտի և Լորուտի ԲՄԿ-երը՝ Դսեղի ԱԿ-ի ցանցում) են նշել 2005թ.-ին ազատ հավաքագրմամբ իրենց բուժհաստատությունում գրանցվածների թիվը:

Գնահատված 13 ՊԿ/ԱԿ-ներից 6-ը (Ամասիայի, Անիպենզայի, Մեծ Պառնիի, Փանիկի ԱԿ և Ախուրյանի ու Ստեփանավանի ՊԿ) նշել են, որ պարբերաբար հաշվարկում են իրենց բուժհաստատությունում մատուցվող ծառայությունների միավորի ինքնարժեքը: Աղինի և Դսեղի ԱԿ-երը այդպիսի հաշվարկ կատարում էին երբեմն: Ամբուլատորիաներից երկուսը (Ախուրիկ և Մարմարաշեն) նշել են, որ պարբերաբար, իսկ երկուսը (Մայիսյան և Թումանյան)՝ որ երբեմն հաշվարկում են իրենց մատուցած ծառայությունների միավորի ինքնարժեքը: Երկու ԲՄԿ (Ոսկեհասկ և Իսահակյան) նույնպես նշել են, որ իրականացնում են մատուցվող ծառայությունների միավորի ինքնարժեքի հաշվարկ: Ինչևէ, այս արդյունքներին հարկավոր է զգուշությամբ մոտենալ, քանի որ դրանք չեն հաստատվել ԱԱՊԲ ծրագրի ֆինանսական բաղադրիչի կողմից իրականացված լրացուցիչ ուսումնասիրությամբ (“Առաջին գոտու թիրախային բուժհաստատություններում հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների ներկայացման և ինքնարժեքի հաշվարկման կարիքների գնահատում”): Այս գնահատման արդյունքների համաձայն մատուցված ծառայությունների ինքնարժեքի հաշվարկ չի կատարվում Մեծ Պառնիի, Անի-Պենզայի, Ամասիայի, Փանիկի ԱԿ-ներում, Ախուրիկի, Մայիսյանի և Աղինի ԲԱ-ներում: Ծախսերի դասակարգումն ըստ գործառույթների և բնույթի (ուղղակի և անուղղակի) կատարվում է միայն այն բուժհաստատություններում, որտեղ ՅՄԲԾ-ի կողմից ներդրվել է Excel-ով ինքնարժեքի հաշվարկման համակարգ:

